ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Հնագիտական հուշարձաններով հարուստ լեռնային Ղարաբաղը (պատմական Արցախը) Հայկական լեռնաշխարհի այն գավառներից է, որի հնագիտական հուշարձանները համեմատաբար քիչ են ուսումնասիրված։ Դրանք գիտական աշխարհին հայտնի դարձան անցյալ դարի 90-ական թթ. սկսած։ Այստեղ առաջին անգամ հետազոտություններ ու պեղումներ են կատարել Շուշվա ռեալական ուսումնարանի ուսուցիչ, գերմանացի Էմիլ Ռեսլերը[1], Ռուսական կայսերական հնագիտական ընկերության անդամ Ա. Ա. Իվանովսկին[2], իսկ սովետական իշխանության տարիներին՝ Ս. Տեր-Ավետիսյանը[3], պրոֆեսոր Ի. Ի. Մեշչանինովը[4], Ի. Մ. Ջաֆարզադեն[5], Ջ. Ալեքսանդրովիչ-Նասիֆին[6], Յա. Ի. Հումելը[7], Կ. Խ. Քուշնարևան[8], Ն. Վ. Մինկեվիչ-Մուստաֆաևան[9] և ուրիշներ։

Հարկ է նշել նաև, որ արդի ժամանակներում Ղարաբաղի հին շրջանի նյութական մշակույթի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարողները այս կամ այն կերպ անդրադառնում են Ռեսլերի և Հումելի պեղումներից հայտնաբերված առարկաներին, չընդգրկելով դամբարաններից գտնված նոր նյութերը, որոնք ժամանակ առ ժամանակ ի հայտ են գալիս պատահականորեն։

Լեռնային Ղարաբաղը հատկապես հարուստ է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների մշակույթով։ Դրանք առանձին դամբարաններ են և ընդարձակ դամբարանադաշտեր, որոնց մի փոքր մասն է գիտական աշխարհին հայտնի։ Բացի այդ, հուշարձանների մի զգալի մասը ենթարկվում է ժամանակի քայքայիչ ազդեցության և ոչնչանում է ամենատարբեր եղանակներով։

Վերջին տարիներս Ստեփանակերտի մոտ, շինարարական աշխատանքների ժամանակ, բացվել են երկու հնավայրեր, որտեղից գտնված առարկաները նման են 1939 թ. Յա. Ի. Հումելի կողմից Ստեփանակերտում հայտնաբերված նյութերին[10]։ Դրանցից մեկը գտնվում է քաղաքի հյուսիսային շրջանում։ Այստեղ բացվել է մոխրի հաստ շերտ, որի միջից անտաշ քարերի հետ միասին գտնվեց քարե սանդ իր սանդակոթով։ Թե՛ սանդը, և թե՛ սանդակոթը լավ հղկված են։

Մյուս հնավայրը դամբարան է։ Այն բացվել է Ստեփանակերտի հյուսիս-արևելյան մասում։ Այստեղ հայտնաբերվել են օբսիդիանե լավ մշակված մակերեսով շեղբ, ոսկրե գործիքներ, իլիկի գլխիկ, քարե սրածայր հղկիչ, սանդակոթ (երկուսն էլ սև գույնի որձաքարից) և միականթ կճուճ-խնոցի։ Իլիկի գլխիկը ոսկրից է, որի կենտրոնում կա անցք՝ իլիկի պոչը ամրացնելու համար։ Քարե սրածայր հղկիչը, որի երկարությունը 7 սմ է, հավանաբար օգտագործվել է առարկաներ հղկելու և քերելու համար։ Միականթ խնոցին գորշագույն է. նստուկը՝ հարթ, իրանը՝ ուռուցիկ։ Իրանի ուսերը զարդարված են հորիզոնական և ալիքաձև ակոսներով։ Պարանո-

---

[1] Э. А. Реслер, Отчеты археологической комиссии за 1894—1898 гг. (архив Института истории материальной культуры АН СССР, ф. 1).

[2] А. А. Ивановский, По Закавказью, МАК, вып. VI, М., 1911.

[3] С. Тер-Аветисян, Памятники древности Карабаха и скифская проблема, Тифлис, 1934.

[4] И. И. Мещанинов, Краткие сведения о работах археологической экспедиции в НК и Нахкрай в 1926 г. Сообщения ГАИМК, М., 1927.

[5] И. М. Джафарзаде, Ходжалинская экспедиция. Земляной курган № 5, «Известия» Аз. ФАН СССР, 1941, № 2.

[6] Дж. Александрович-Насыфы, Перечень и краткая характеристика курганов главного курганного поля около ст. Ходжалы, «Известия» Азкомстариса, вып. III, Баку, 1927.

[7] Я. И. Гуммель, Раскопки в НКАО в 1938 году, «Известия» Аз. ФАН СССР, 1939, № 4.

[8] К. Х. Кушнарева. Культура Нагорного Карабаха по археологическим источникам (автореферат кандидатской диссертации), Л., 1951, *նույնի՝* Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, 1957, XXVII.

[9] Н. В. Минкевич-Мустафаева. Ходжалы-Кедабекская археологическая культура (автореферат кандидатской диссертации), Баку, 1961.

[10] Я. И. Гуммель, Отчет обкома КП НКАО в 1941 году. Машинопись, фонд ГИКМ НКАО (Гос. историко-краеведческий музей), дело № 5, էջ 9։

Աղյուսակ I



Աղյուսակ II

Աղյուսակ III



Աղյուսակ IV

ցի վրա առկա են փայլեցման եղանակով սրված աղեղնաձև գծեր։ Կանթի ձախ կողմում կա խնոցիներին բնորոշ մի անցք։

Նշված հնավայրերից հայտնաբերված առարկաները պատկանում են մ. թ. ա. XI—X դարերին՝ բրոնզե դարի ուշ ժամանակաշրջանին։

Նախնադարյան մշակույթի հնավայրերից մեկն էլ գտնվում է Մարդակերտի շրջանի «Մեհմանայի թմբեր» (Մեհմանա գյուղի մոտ) կոչվող տեղամասում, որը ծածկված է հսկա ծառերով։ Անտառամասի հյուսիս-արևելյան հատվածում, գետնի մակերեսի վրա առկա են շուրջ 30 դամբարաններ։ Տարիներ առաջ անհայտ չարագործներ ավերել են դամբարաններից մեկը։ 1967 թ. դամբարանադաշտի նյութական մշակույթի նմուշների էությունը պարզելու, Ստեփանակերտի թանգարանը հարստացնելու նպատակով մենք բացեցինք մի գերեզման, ուր մարդու աճյունն ամփոփված էր քարերից շարված ձվաձև դամբարանափոսի մեջ։ Ննջեցյալի մնացորդների հետ դամբարանում գտնվեցին մի քանի առարկաներ (աղ. I)։ Ոտքերի մոտ դրված էր սև գույնի լավ թրծված միականթ կճուճ, որի նստուկը ուռուցիկ է, բերանը և պարանոցը՝ նեղ, անզարդ, բարձրությունը 30 սմ է (աղ I, նկ. 13)։ Գտնվել է նախշազարդ գլխիկով բրոնզե երկսայր դաշույն։ Դաշույնի երկարությունը 25 սմ է։ Նրա երախակալի վերին ծայրում կա անցք՝ փայտե բռնակը գամելու համար, որին հագցրել են եռանկյունազարդ նախշերով գլխիկը (աղ. I, նկ. 1, 3)։ Այդպիսի դաշույնները գրականության մեջ հայտնի են սևան-զարաբաղյան անվան տակ և հանդիպում են Հայաստանի ու Անդրկովկասի մ. թ. ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի նյութերում։ Նույն դամբարանից հայտնաբերվել է նաև դանակ-ածելի, որի շեղբի մի կողմը սուր է, իսկ մյուսը՝ բութ։ Շեղբի վրա կա երկու անցք։ Այն ունեցել է փայտյա երկարավուն բռնակ, որը չի պահպանվել։ Դանակ-ածելու շեղբի երկարությունը 12 սմ է, լայնությունը՝ 2 սմ (աղ. I, նկ. 2)։ Գտնվել է նաև բրոնզե դուր (աղ. I, նկ. 4), որի մի ծայրը սուր է և ամրացվել է փայտին, իսկ աշխատանքային մասը՝ տափակ։ Ննջեցյալի հետ դամբարանում թաղվել են նաև սարդիոնի ուլունքներ և նետասլաքներ։ Առանձնապես ուշագրավ են օբսիդիանից և կայծքարից պատրաստված եռանկյունաձև ու նշաձև նետասլաքները, որոնց մակերեսները նուրբ ռետուշված են, ունեն 4—7 սմ երկարություն (աղ. I, նկ. 7—12)։ Նետասլաքերը ստորին մասում ունեն խոր փորվածքներ՝ փայտին ամրացնելու համար։ Նման նետասլաքներ լավ հայտնի են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների հուշարձաններից՝ Լճաշենից, Շամշադինից, Գոլովինոյից[11], Գետաբեկից[12], Մակարաշենից և այլ վայրերից։ Մեհմանայի դամբարանից հայտնաբերված առարկաները իրենց համադրություններն ունեն Հայաստանի՝ մ. թ. ա. X—IX դարերով թվագրվող հնավայրերից հայտնի նյութական մշակույթի նմուշների հետ։

Վերջերս Մարդակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղի հյուսիս-արևմտյան մասում գտնվող «Պտաշանց կալ» տեղամասում ջրավազանի շուրջը փորելիս բացվել են մի քանի քարարկղներ և հողափոր դամբարաններ։ Տեղանքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բացված գերեզմանները նույն տեղամասում գտնվող դամբարանադաշտի շարունակությունն են կազմում։ «Պտաշանց կալի» կենտրոնական մասում բացեցինք մի դամբարան, որի մեջ ամփոփված էր մեջքի վրա պառկած երկու կմախք։ Կմախքների գանգերը դասավորված էին հակադիր դիրքով՝ մեկի գլուխը դարձված էր դեպի հարավարևելք, իսկ մյուսինը՝ հյուսիս-արևմուտք։ Հայտնաբերվեցին տարբեր տեսակի շորս կավանոթներ, բրոնզե եռաթև նետասլաքներ, կոճակներ, մասանի, կախիկներ, թռչունի եռաճանկ ոտքի և կիսաալուսնաձև ու բանալու տեսքով երկու այլ առարկաներ, քարե սրոց, ոսկրից, ապակուց և պաստայից պատրաստված ուլունքներ (աղ. II)։ Դամբարանից հայտնաբերված կավանոթների մեջ իր կառուցվածքով աչքի է ընկնում հարթ հատակով միականթ սափորը, որի մակերեսը նախշված է կորագիծ քանդակներով (աղ. II, նկ. 14), կանթը ունի ոլորուն նախշեր։ Մյուսը կարմիր լաքով ներկված երկկանթանի անզարդ կավանոթ է (աղ. II, նկ. 4), երրորդը գորշ գույնի միականթ փոքրիկ գավ է, վերևից ներքև իջնող կորագիծ զուգահեռ զարդաքանդակներով (աղ. II, նկ. 3)։ Հաջորդը կավե փոքրիկ աղաման է, սև թրծվածքով (աղ. II, նկ. 2)։ Այդպիսի կավանոթներ հայտնի են ինչպես Ղարաբաղից, այնպես էլ Նոյեմբերյանի շրջանի Ջուջևանի դամբարանադաշտից[13], կի-

---

11 А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, էջ 118։

12 Д. А. Халилов. Археологические памятники западного Азербайджана в эпоху бронзы и начала железного века. Баку, 1959, էջ 97, աղ. XI, 5, 7, 8, 9 և աղ. XII, 12, 13, 18 (աղբբեջաներեն)։

13 Ս. Ս. Ջիլինգարյան, Վաղ հայկական հուշարձանները Ջուջևանի դամբարանադաշտում, «Լրաբեր», 1971, № 2, էջ 72։

բովականի շրջանի Մակարաշենից[14], Աստղի բլրից և այլ տեղերից։

Հետաքրքիր են բրոնզե նետասլաքները, որոնց չափերը հասնում են 1—4 սմ։ Դրանք եռաթև են, հետին մասում ունեն անցք՝ փայտյա ձողիկին ամրացնելու համար (աղ. II, նկ. 13)։ Ի դեպ, նետասլաքներից մի քանիսի անցքի մեջ պահպանվել են փայտյա ձողիկի մնացորդները։ Դրանցից մի քանիսը վերին մասում ունեն ելուստ։ Գերեզմանում գտնվել է 26 նետասլաք։ Դրանք իրենց ձևով պատկանում են սկյութական նետասլաքների խմբին և լավ հայտնի են Կարմիր բլուրի, Էրեբունիի, Մակարաշենի[15], Շամխորի[16], Գետաբեկի և այլ հնավայրերից, որոնք թվագրվում են մ. թ. ա. VII—VI դարերով։ Իր կառուցվածքով առանձնահատուկ ուշադրության է արժանի թուրունի թաթի ձևով բրոնզից պատրաստված կախիկը, որի երկարությունը 6 սմ է (աղ. II, նկ. 7)։ Այդպիսի նմուշ 1896 թ. հայտնաբերել է նաև Ա. Ա. Իվանովսկին[17]։ Կոճակները և ադեղնաձև ու բանալու տեսքով առարկաները հավանաբար ձիու սանձի մասեր են (աղ. II, նկ. 5, 6, 10)։ Քարե սրոցը, որի մի ծայրում կա անցք՝ գոտուց կախելու համար, ունի 7 սմ երկարություն և 2 սմ լայնություն (աղ. II, նկ 8)։ Այդպիսի սրոցներ պատահում են Նոյեմբերյանի շրջանի Լրճկածորի, Ջուջևանի դամբարաններում[18], Գոլովինոյում[19] և Շամխորում[20]։

1969 թ. Դաշբուլաղ գյուղի «Տանձատափ» կոչվող տեղամասում նոր ֆերմայի համար տեղանքը հարթելու ժամանակ բացվեց մի հին դամբարան։ Այստեղ հայտնաբերվել են բրոնզե ճարմանդ, գավազանի գլուխ, ապարանջաններ, ականի, մատանի, եռանկյունաձև նախշերով կախիկներ, մեդալիոն, վարսակալներ, նախշերով գլանաձև իր, ուլունքներ և երկաթե զենքեր (աղ. III)։ Բրոնզե ճարմանդը վահանաձև է, ներսից՝ գոգավոր, դրսից՝ ուռուցիկ։ Արտաքին կողմի վրա ունի ուղղահայաց և հորիզոնական կիսաշրջանաձև գծիկավոր ու հասկանման նախշազարդեր, իսկ կենտրոնական և կողմնային շրջագծերը փորագրված են ոլորապտույտ նախշով։ Կենտրոնում շրջանաձև անցքով վահանիկների տրամագիծը 8 սմ է։ Նրանք իրար են միացվել հանգույցներով։ Մեկի ծայրին ամրացված է եղել երկաթե օղակաձև օղ, իսկ մյուսի՝ ակնոցավոր օձի գլխի պատկերով մի կեռ։ Ճարմանդի վահանիկները նեղ ձուլածո պարանոցով միացած են հարթ թիակներին, որոնք կենտրոնում ունեն անցք՝ գամելու համար (աղ. III, նկ. 1)։ Ճարմանդի հետ գտնվել են բրգանման, ատամնավոր բրոնզե թիթեղներ և կոճակներ, որոնք երևի գամերով ամրացված են եղել գոտու ժապավենի վրա (աղ. III, նկ. 2)։ Տանձատափի դամբարանից հայտնաբերված ճարմանդը հնարավորություն է տալիս մոտավոր պատկերացում կազմելու ամբողջական գոտու կառուցվածքի մասին։ Թերևս այն եղել է կաշվից, որի ծայրերը իրար են միացել բրոնզե ճարմանդով։ Իր հորինվածքով այն պատկանում է Ղարաբաղում հայտնի, երկրաչափական բնույթի փորաքանդակներ ունեցող բրոնզե գոտիների խմբին, որոնց դասակարգումը տվել է մարդաբան Ռուդոլֆ Վիրխովը[21]։ Անցյալ դարի 90-ական թթ. Գետաբեկի № 36 քարարկղային դամբարանից Ա. Ա. Իվանովսկին[22] հայտնաբերել է այս տիպի գոտի, որը վերագրվում է մ. թ. ա. VII—VI դարերին։ Բրոնզե գավազանի գլխիկը կոնաձև «հրթիռանման» է, ծայրը սուր։ Այն կենտրոնական մասում հակադիր կողմերի վրա ունի երկու կիսաշրջանաձև և երկու եռանկյունաձև սրածայր ելուստներ, իսկ կոթառի մասը գլանաձև է և ունի գամելու համար անցք։ Նրա երկարությունը հավասար է 15 սմ (աղ. III, նկ. 8)։

Ուշ բրոնզեդարյան դամբարաններում հանդիպում են մեծ քանակությամբ խողովակաձև ցլագլուխ գավազանի գլխիկները, որոնցից տարբերվում է մեր նշված գավազանի գլուխը։ Դրանց մի քանի այլ նմուշներ պահվում են Ղարաբաղի պատմա-երկրագիտական թանգարանում՝ գտնված 1938 թ. Կրկժանից[23]։ Կախիկները, որոնցից գտնվել է 6 հատ, սնամեջ են, քառակող, դրանց կողմնային հարթությունների վրա կան եռանկյունի փորվածքներ (աղ. III, նկ. 3)։ Բավականին լավ է պահպանվել բրոնզե ունելին, որն ունի 10 սմ երկարություն (աղ.

---

[14] Հ. Հ. Մարտիրոսյան, Նշվ. աշխ., էջ 287։

[15] Նույն տեղում, աղ. XXX, նկ. 20։

[16] Դ. Հ. Խալիլով, Նշվ. աշխ., էջ 97, աղ. XIX, նկ. 4, 5։

[17] Ա. Ա. Իվանովսկի, Նշվ. աշխ., էջ 184, աղ. XVI։

[18] Նույն տեղում։

[19] Հ. Մնացականյան, Դամբարանների պեղումները Գոլովինոյում։ «Աշխատություններ» Հայաստանի պետական պատմության թանգարանի, Երևան, 1959, № 5, էջ 18։

[20] Դ. Հ. Խալիլով, Նշվ. աշխ., էջ 75, աղ. XIII, նկ. 8.

[21] Ռ. Վիրխով, Կովկասի տեղը քաղաքակրթության մեջ, «Ազգագրական հանդես», 1895։

[22] Ա. Ա. Իվանովսկի, Նշվ. աշխ.։

[23] Я. И. Гуммель, Раскопки в НКАО в 1938 г., էջ 78, աղ. II, նկ. 5, 6, 7։

III. նկ. 9)։ Ոսկրից պատրաստված առարկաների մեջ ուշագրավ է վարազի ժանիքը, որի էմալի շերտը պահպանվել է ամբողջությամբ (աղ. III, նկ. 10)։ Նրա մի ծայրը հղկված է, իսկ մյուս ծայրին հագցված է բրոնզե ժապավեն, որն ամրացրած է գամով։ Հավանաբար, ատամը ունեցել է պաշտամունքային նշանակություն։ Դամբարանում ամփոփված են եղել մեծ թվով սև գույնի կավանոթներ, որոնցից միայն մեկն է մնացել ամբողջական։ Գավը միականթ է, անզարդ, նրա նմանակները պատահում են Մակարաշենի[24] դամբարաններում (աղ. III, նկ. 14)։

Բրոնզե այս իրերի հարևանությամբ գտնվել են նաև երկաթե դաշույններ (աղ. III, նկ. 13) և նիզակներ (աղ. III, նկ. 12), որպիսիք հայտնի են Գետաբեկի[25], Մակարաշենի[26] և այլ դամբարաններից։

«Ծանձատափից» գտնված նյութերը թվագրվում են վաղ հայկական ժամանակաշրջանով, այսինքն՝ մ. թ. ա. VI—V դարերով։

Ղարաբաղում հնավայրերով հարուստ տեղամասերից մեկն էլ Հադրութի շրջանի Իշխանագետի հովիտն է։ Գետի աջ և ձախ կողմերի բլրալանջերին ու հանդամասերում առկա են բաղմապիսի դամբարաններ, որոնք հնագիտական բավական հարուստ նյութ են պարունակում։ Դրանցից է Ազոխի հայտնի քարայրից դեպի հյուսիս-արևմուտք ընկած «Գյունե արտ» տեղամասի հնավայրը։ Այստեղ բլրալանջի երկարությամբ, թփերի արանքում դասավորված են մի շարք ցածրադիր դամբարանաթմբեր։ Բացվել է մեկ դամբարան, որից հանվել են բրոնզե և երկաթե իրեր։ Գտնվել են բրոնզե ապարանջաններ, կախիկներ, զանգակ, վզնոց, դուր, ժապավենի ջարդոն, քարե սանդակոթ, սարդիոնի ուլունքներ, երկաթե դանակ, նիզակ, մանգաղ, սև և դորշ գույնի կավանոթների բեկորներ (աղ. IV)։

Հետաքրքիր նմուշ է քառաստամ կախիկը։ Նրա ատամներից երկուսը երկայրի են, իսկ երկուսը՝ միտսայր, կամ սղոցի ատամներ են հիշեցնում։ Ստորին մասում լայն է և գնալով դեպի վերին ծայրը բարակում է ու կազմում ուղղանկյունաձև հարթություն, որի կենտրոնում կա անցք՝ կախելու համար։ Երկարությունը 9 սմ է (աղ. IV, նկ. 3). սա ավելի վարպետորեն է պատրաստված, քան Ա. Ա. Իվանովսկու կողմից Ղարաբաղում հայտնաբերվածը[27]. Մյուս կախիկը (աղ. IV, նկ. 4) շրջանաձև հարթակի վրա ունի անցք, իսկ ստորին մասը կեռ է։ Բրոնզե դուրը քառակող է, մի ծայրից սուր, մյուսը՝ գլանաձև անցքով (աղ. IV, նկ. 9)։ Հավանաբար այն ունեցել է փայտյա կոթառ և օգտագործվել է ծակելու, փորելու, հղկելու համար։ Նրա երկարությունը 9 սմ է, սայրի լայնությունը՝ 1 սմ։ Մանգաղը կորաձև է և իր ձևով շատ քիչ է տարբերվում մեր ժամանակի մանգաղից (աղ. IV, նկ. 11)։

«Գյունե արտից» հայտնաբերված առարկաները պատկանում են մ. թ. ա., VII—VI դարերին։

Ղարաբաղում քարարկղային և դամբարանաբլուրային թաղումների կողքին հանդիպում են նաև կարասային թաղման ձևեր։ Դրանք տարածված են ինչպես հարթավայրային, այնպես էլ նախալեռնային և լեռնային շրջաններում։ Կարասային թաղումներ հարթավայրային Ղարաբաղում հայտնաբերել է պրոֆեսոր Ի. Ի. Մելշանինովը[28], իսկ Ստեփանակերտում՝ Յա. Ի. Հումելը[29]։ Բացի նշվածներից այդպիսի թաղումներ են հայտնաբերվել Խոջալվից, Մեհմանայից և ավելի շատ՝ Ստեփանակերտից ու Դաշբուլաղ գյուղի շրջապատից։

1967 թ. Ստեփանակերտի հարավ-արևմտյան մասում հայտնաբերվել է մի կարասային թաղում։ Կարասի մեջ ամփոփված դիակի կողքին գտնվել է կավե ուլունք, որի տրամագիծը 2 սմ է, հաստությունը՝ 0,5 սմ և կենտրոնում ունի անցք։ Մեզ հաջողվեց այստեղ բացել ևս 8 կարասային թաղումներ։ Դրանք դասավորված են զուգահեռ, 1—2 մետր հեռավորությամբ։ Նընջեցյալը պառկեցված է կողքի վրա, կարասը թեքված է դեպի հարավ-արևելք, իսկ նրա բերանը դարձրած է հյուսիս-արևելք։ Կարասը փակված է մեկ կամ երկու կոպիտ քարերով։ Կարասները տարբեր տրամաչափի են։ Երկու կարասներում ամփոփված է երեխայի աճյուն, որի կողքին գտնվել են մանր գունեղ քարերից, ապակուց և պաստայից պատրաստված ուլունքներ։ Կարասներից մեկում ամփոփված էր տղամարդու աճյուն, որի մոտ գտնվել են տարբեր տրամաչափի հինգ մատանիներ, երկաթե երկայր թրի բեկոր, որի կոթառամասին հագցրած է եղել փայտյա բռնակ, իսկ վերջինիս վրա՝ գամերով ամրացված բրոնզե նախշազարդ թիթեղ։

---

[24] А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 287, աղ. XXX, նկ. 5։

[25] Д. А. Халилов, նշվ. աշխ., էջ 107, աղ. XXII, նկ. 4։

[26] А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 287, աղ. XXX, նկ. 4։

[27] А. А. Ивановский, նշվ. աշխ., էջ 88, աղ. IV, նկ. 10։

[28] Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 2, Երևան, 1941, էջ 35։

[29] Я И. Гуммель, Отчет обкома КП НКАО. 1941 г., ф. № 5, էջ 9։

Թրի պահպանված մասի երկարությունը 40 սմ է, լայնությունը՝ 5 սմ։ Հայտնաբերվել են նաև երկաթե միասայր դանակներ և գործվածքի մի պատառիկ, որը կարասի մեջ մուգ կանաչ գույնի էր, իսկ հանելուց սկսեց գունազրկվել և մոխրանալ. այնուամենայնիվ, մեզ հաջողվեց պահպանել այն։ Կարասներից երրորդում պարզորոշ նկատվեց, որ աճյունն ամփոփված է եղել նրստեցրած դիրքով։ Նրա ձախ կողմում, ոտքերի մոտ դրված էր մեկ երկկանթ կճուճ և փոքրիկ թաս։ Կթիչը գորշագույն է. անզարդ, բարձրությունը հավասար է 30 սմ-ի։ Մյուս կարասները ջարդված էին, դրանց մեջ հայտնաբերվեցին փոքրիկ կավանոթների բեկորներ և մարդկային կմախքի ոսկորներ։ Հայտնաբերված միկրասյան թաղումը վերաբերում է մ. թ. ա. V—III դարերին։

ՅՈՒ. ԱՍՐՅԱՆ (Ստեփանակերտ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒ ՎՐԱ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Թրքական տիրապետության շրջանին Պուլղարիո մեջ գոյություն ունեին բազմաթիվ հայ գաղութներ։ Անոնցմե հասած են մինչև այսօր կարգ մը գրավոր հիշատակարաններ, որոնք կուտան հետաքրքրական տեղեկություններ պուլկարահայ անցյալի մասին և մասնավորապես լույս կսփռեն անոնց նյութական մշակույթի վրա այս շրջանին ընթացքին։

Հետաքրքրական են մի քանի մարմարյա սալեր՝ զետեղված ժամանակին աղբյուրներու վրա հայկական արձանագրություններով։ Անոնցմե չորսը երկլեզվյան են՝ հայերեն և թուրքերեն, այլ մեկը միայն՝ հայերեն։

1. Մարմարյա սալ հայ-թրքական արձանագրությունով 1740-են, Վառնայեն։

Սալը առնված է իբրև ավար ռուսական բանակեն 1828—1829 թթ. ռուս-թրքական պատերազմի ընթացքին, Վառնայի բերդին գրավումեն հետո։ Նախ սալը կգտնվեր ռուս զորավար Պ. Ա. Դոլգենի քով, բայց հետո փոխադրված է Պետերբուրգի Տավրիկյան պալատը։ 1850-ին կայսրը Նիկոլայ I-ի հրամանով հարտարապետ Մոնիկեթի սկրսած է կառուցանել բաղնիք մը Պուշկին քաղաքի Եկատերինյան պարտեզի մեջ։ Մահմետական մզկիթի նմանության պատճառով դայն անվանած են «Թրքական բաղնիք»։ Անոր վրա զետեղված են մի քանի թրքական արձանագրություններ, որոնց միջև և Վառնայի սալը։ Հայրենական պատերազմի ընթացքին (1941—1945) շինությունը վնասված է, բայց Վառնայի արձանագրությունը պահպանված է[1]։

Թրքական արձանագրությունը, որ կզանազանվի իր բանաստեղծական պարունակությունով, հետևյալն է.

«Ուզունօղլուն իր ջանքերով ակը այստեղ հոսեցուց։ Ով որ բարիք կգործե իր առատաձեռնությամբ թող արժանի ըլլա քավության և գթության։ Անոր ակը թող ցույց տա արդարության ուղին, անոր աղբյուրը թող ճշմարիտ հավատ ստեղծե, անոր ամեն մեկ ծորակը գթության աղբյուր ըլլա, հագեցնելով ծարավները։ Խանելով երեք ըսինք տարին։ Խմենք որովհետև դրախտի ջուր հոսիլ է։ 1153»[2]։

Վերջընթեր տողը կներկայացնե ժամանակագրություն մը, այսինքն տառերու թվական նշանակությունեն երեք պակսեցնելով կհավասարի աղբյուրի կառուցման թվականին, որ է 1153 (1740)[3]։

Թրքական արձանագրության տակ կգտնվի երեքտողեա հայկական արձանագրություն մը.

«Յիշատակ է ախբուրըս արեւելցի
մահտեսի Նազարին
Թվի[ի]ն ՌՃՁԹ օքոստ[ո]սի Ի-ին»։

Կապգիրներ. ա-կ, մ-ա՝ առաջին տող, ա-բ, ե-ւ, ի-ն՝ երկրորդ տող, թ-վ, ս-ի, ի-ն՝ երրորդ տող։

Արձանագրությունը հավանաբար կգտնվի եղեր Վառնա քաղաքին մեջ գտնվող աղբյուրի մը վրա, որ շինված է եղեր քաղաքին մեջ բնակող հայազգի մահտեսի Ղազար Ուզունօղլունեն[4]։

2. Վելիքի Բրեսլավի թանգարանի պահարանին մեջ կգտնվի հայերեն և թուրքերեն արձանագրությամբ մարմարյա սալ մը։ Ունի

---

1 Տե՛ս А. П. Векилов, О турецких эпиграфических памятниках в городе Пушкине, «Эпиграфика востока», XIII, 1960, էջ 71—75։

2 А. Векилов, նշվ. աշխ., էջ 73—7.

3 Նույն տեղում, էջ 74։

4 Ա. Վեքիլովը (հիշ. հոդվ., էջ 75) կկարծե, որ աղբյուրը շինուած է Ուզունօղլուի նյութական միջոցներով և թե մահտեսի Նազարը միայն աղբյուրի կառուցանող վարպետն է։ Մենք կկարծենք, որ Ուզունօղլուն և մահտեսի Նազարը միևնույն անձն են, այսինքն Ուզունօղլու՝ մահտեսի Նազարին մականունն է։